ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/25

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.03.2018թ. թիվ 04/26-3/4299-18 գրությամբ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00905623) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.03.2018թ. թիվ 18/05 գրության հիման վրա, 12.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը 05.03.2018թ. թիվ 18/05 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 2018թ. կարիքների համար Լամպերի և լուսատուների գնման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղցրած մասնակից «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 440,649 դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 01.03.2018թ. հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստում հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած եզրակացությունը՝ ընթացակարգի 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղցրած մասնակից «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը մերժել է»:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.03.2018թ. թիվ 04/26-3/4299-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էին Ընկերության տնօրեն Համլետ Ավետիսյանը և ներկայացուցիչ Միշա Կարախանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/25 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.03.2018թ. թիվ 04/26-3/4299-18 գրությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 05.03.2018թ. թիվ 18/05 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/05» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.02.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3, և 21.02.2018թ. ժամը 14:30-ին նիստի թիվ 4, 01.03.2018թ. ժամը 14:30-ին նիստի թիվ 5 արձանագրությունները, ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից 07.03.2018թ. «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/05» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 16.02.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 5.1 կետով արձանագրել է, որ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 6-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության առաջարկած գներն առանց ԱԱՀ 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով կազմել են համապատասխանաբար 67,800 ՀՀ դրամ և 10,200 ՀՀ դրամ:

Արձանագրության 6.2 կետով Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

21.02.2018թ. ժամը 14:30-ին նիստի թիվ 4 արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշում է ընդունել ծանուցել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում նեկայացնել հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 28.02.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 440,649 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 01.03.2018թ. ժամը 14:30-ին նիստի թիվ 5 արձանագրության 1.4 կետով արձանագրել է, որ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 440,649 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Նույն արձանագրության 1.6 կետով Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, որոշել է Ընթացակարգի 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած

մասնակից «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի

պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 8.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 16.03.2018թ. կայացած նիստի ժամանակ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի տնօրենը հայտնեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության մեջ արտացոլված ժամկետանց հարկային պարտավորությունը հավանաբար ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանման վրիպման արդյունք է, քանի որ Ընկերությունը նույն օրը՝ 16.02.2018թ. հայտ է ներկայացրել նաև ԵՊՀ հիմնադրամի կողմից կազմակերպված «ԵՊՀ ԻՄ-ԳՀԱՊՁԲ-18/35» ընթացակարգին, որի շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարված հարցման արդյունքում ներկայացվել է եզրակացություն, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց

պարտավորություն չի ունեցել: Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել նաև վերը նշված եզրակացության պատճենը:

Միաժամանակ, Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից 07.03.2018թ. «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա՝ 16.02.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն չի ունեցել:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 16.02.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.03.2018թ. «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00905623) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ